չներկայացնող համեստ ծրագրի. երկրորդ՝ որպէսզի ձեռք բերէ հայերի համակրանքը, հայերի, որոնք շատ թանգ են Գերմանիայի համար, իբրեւ մեծամասնութիւն Կիլիկիայում, որը Գերմանիան համարում է իր ազդեցութեան շրջան: Այդ պատճառով, Գերմանիայի վարմունքը, ամբողջ ժամանակ, աչքի էր դարնում անկեղծութեան բացակայութեամբ և նրա աջակցութիւնն ունէր զուտ ցուցական բնոյթ (հայերի համար): Իրապէս, գերման դիւանագէտները թիւրքերի հաւատարիմ խորհրդատուներն էին»:*)

Այս բոլորը տեսնում էին և հայերը, եւ նրանցից խորատեսները լուրջ անհանգստութեամբ էին նայում ապագային: Բայց լայն հասարակութիւնը և, մանաւանդ, բարենորոգումների աշխատանքը տանող շրջանները՝ Փարիզից մինչև Էջմիածին՝ համակուած էին յաղթողի զոհունակութեամբ:

1914 թի դարունը և ամառը անցան բարենորոգումների գործի կազմակերպման աշխատանքների մէջ: Պետութիւնների առաջարկած թեկնածուներից, Բ. Դուռը ապր. 2 (15)-ին ընդհանուր քննիչներ ընտրեց հոլանդացի Վեստենենկին և նորվեգացի Հոֆին ու մայիս 10(23)-ին ստորագրեց նրանց հետ վերջնական պայմանը: Եւ նախնական անհրաժեշտ աշխատանքները լրացնելուց յետոյ Հոֆը մեկնեց իր պաշտօնատեղին՝ Վան. կարճ ժամանակից յետոյ պիտի մեկնէր և Վեստենենկը:

Ճիշտ է, թիւրք կառավարութիւնը և Իթթիհատը չէին ծածկում իրենց դժգոհութիւնը հայերից եւ հակառակութիւնը բարենորոգումների ծրագրից: Ճիշտ է, ճանապարհին և Վանում թիւրք իշխանութիւններն ու հասարակութիւնը թշնամանքով ընդունեցին Հոֆին, իսկ Վանում թիւրք պաշտօնեաները նոյնիսկ հրաժարուեցին նրան ենթարկուելուց, բայց և այնպէս «բարենորոգումները սկսել էին գործադրուել», իսկ այս ինքնին արդէն կարևոր նշանակում էր: Պատճառ չկար կասկածելու, որ, վերջ ի վերջոյ, թիւրքերը տեղի կը տան, և բարենորոգումները կը մտնեն ոյժի մէջ: Հայ ժողովրդի առջեւ բացւում էին նոր, անսահման, հրապուրիչ հորիզոններ...

Այսպէս էր դրութիւնը, երբ յուլիսին, Էրզրումում, բացւեց Հ. Ց. Դաշնակցութեան 8-րդ ընդհանուր ժողովը: Մեծ կարևորութիւն էր տրւում այդ ժողովին ո՛չ միայն դաշնակցականների, այլ և դրսի խաւերի կողմից. բարենորոգումների գործադրութեան նախօրեակին, հայրենի երկրի կենտրոններից մէկում գումարւած հայ կեանքին զոյն և բովանդակութիւն տուող կուսակցութեան ընդհանուր ժողովը, անկասկած, ունենալու էր խոշոր նշանակութիւն, մասնաւորապէս բնդաւառի համար: Եւ, յիրաւի, Հ. Ց. Դ. 8-րդ ընդհանուր ժողովը իր ուշադրութեան և աշխատանքի գլխաւոր մասը նուիրեց երկրին — նրա ներքին կազմակերպութեան, հողային խնդրին, արտագաղթին, կառավարութեան վարած հակահայ քաղաքականութեան, ինքնապաշտպանութեան, բարենորոգումներին և այլն:

Վերջին հարցի մասին ընդունւեց հետեւեալ բանաձեւը. —

«Ընդհանուր ժողովը՝ լսելով բարենորոգումներու մասին տրւած գե-

*) Նոյն տեղը էջ 173—174: